



## Ընտանեկան բռնության մասին վարչական ռեգիստրի ձևավորումը: Խոչընդոտներ, հնարավորություններ, հեռանկարներ

Մանե Թորոսյան

26.12.2019

2019թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» N 1381-Ն որոշումը, որը հիմք է դնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ վարչական տվյալների հավաքագրման համակարգին: Ներդրվող համակարգը, փաստորեն, փորձ է անում լուծել ընտանեկան բռնության դրսևորումների և դրանց հասցեագրմանն ուղղված ծառայությունների մասին պատշաճ, արդիական և վստահելի տեղեկատվություն ունենալու խնդիրը, ինչն էլ արդյունավետ և գիտելիքի վրա հիմնված հանրային քաղաքականության մշակման կարևորագույն նախապայման է:

Ընտանեկան բռնության մասին համապարփակ տեղեկատվության հավաքագրումը, սակայն, ենթադրում է մեծածավալ ջանքեր՝ գործունեության տարբեր ոլորտներ ներկայացնող մարմինների միջև արդյունավետ համագործակցություն և կորրոկցիոնալ, վերջիններիս կողմից միասնական մոտեցումների կիրառում, վերապատրաստված մասնագետների, անհրաժեշտ գործիքների ու մեխանիզմների առկայություն: Ուստի, համակարգը գործարկելուց և վարչարարական նշանակալի բեռ ստանձնելուց առաջ կարևոր է հասկանալ՝ արդյոք գտել ենք լավագույն լուծումները, արդյոք հաշվի ենք առել պոտենցիալ խոչընդոտներն ու դրանց հաղթահարման տարբերակները, և վերջապես՝ արդյոք ընտանեկան բռնության բազմաոլորտային արձագանքման համակարգը բավականին կայացած է տեղեկատվության հավաքագրման գործառնությունները պատշաճ կերպով իրականացնելու համար, թե ոչ:

Սայաթ Նովա 19, Երևան 0001

Հեռ.՝ 374 (10) 582638

Էլ.փոստ՝ think-tank@ICHD.org

[www.ICHD.org](http://www.ICHD.org)

### Ի՞նչ կարող ենք սովորել միջազգային փորձից

Ընտանեկան բռնության մասին տվյալների հավաքագրման միջազգային փորձի արդյունավետությունը հիմնականում քննարկվում է առկա պրակտիկաների՝ Ստամբուլյան կոնվենցիայի պահանջներին համապատասխանելու տեսանկյունից, և, այս առումով, առավել ուսումնասիրված է Եվրոպայի խորհրդի անդամ երկրների փորձը:

Ստամբուլյան կոնվենցիան մասնակից պետությունների համար սահմանում է ընտանեկան բռնության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման պարտավորություն երկու եղանակով՝ *վարչական տվյալների հավաքագրում* և *սոցիոլոգիական հարցումների իրականացում*, միաժամանակ նշելով՝ հետազոտությունների իրականացմանը աջակցելու պարտավորությունը:<sup>1</sup> Ընդ որում, հետազոտական նշված մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր սահմանափակումները: Վարչական տվյալների հավաքագրումն ու ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ընտանեկան բռնության զոհերին մատուցվող ծառայությունների խնդիրներն ու հնարավորությունները հասկանալու և ծառայությունների որակը բարձրացնելու տեսանկյունից, սակայն չի կարող կիրառվել ընտանեկան բռնության խորքային պատճառներն ու հասարակության շրջանում տարածվածության իրական մակարդակը հասկանալու համար: Կյո նպատակով օգտակար են բնակչությանն ընդգրկող սոցիոլոգիական հարցումներն ու որակական հետազոտությունները:

Հատկանշական է, որ առկա հետազոտություններում հատուկ կերպով շեշտադրվում են ընտանեկան բռնությանը վերաբերող վարչական տեղեկատվության հավաքագրման խոչընդոտներն ու սահմանափակումները և մատնանշվում միջազգային հարթակում որևէ երկրի կողմից գրանցած «լավագույն փորձի» բացակայությունը: Հետևա-

<sup>1</sup> Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, Հոդված 11

բար, միջազգային փորձը այս պարագայում չի առաջարկում պատրաստի լուծումներ և ունիվերսալ մոդելներ, սակայն կարող է օգտակար լինել որոշակի դասեր քաղելու, Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման պոտենցիալ խոչընդոտները հասկանալու և հնարավոր լուծումներ ուրվագծելու հմաստով:

**Ստամբուլյան կոնվենցիան և ընտանեկան բռնության մասին վարչական տվյալների հավաքագրման ստանդարտները**

Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական գեկույցը նշում է այն նվազագույն բնութագրիչները, որոնց առկայությունը վարչական տեղեկատվության մեջ թույլ կտա պատկերացում կազմել ընտանիքում բռնության դրսևորումների և դրանց հասցեագրման ուղղված հիմնական միջոցառումների մասին: Այդ բնութագրիչներն են՝

- բռնարարի և զոհի սեռը, տարիքը,
- բռնության տեսակը,
- բռնարարի և զոհի հարաբերությունների բնույթը,
- բռնության վայրը,
- այլ տվյալներ, որ մասնակից պետությունները կարող են կարևորել՝ ինչպես օրինակ հաշմանդամությունը:
- ենթադրյալ բռնարարի մեղավորությունը ճանաչելու դեպքերը, այդ թվում՝ կիրառված պաշտպանական միջոցները:<sup>2</sup>

Հատկանշական է, որ ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգի հավելվածում տեղ գտած ձևաթղթերը ներառում են պահանջված որջ տեղեկատվությունը և ենթադրում հավելյալ տեղեկությունների առկայություն, ինչպիսիք են, օրինակ, բռնարարի և զոհի աշխատանքային գործունեությունն ու կրթությունը, հոգեկան հիվանդության առկայությունը/ախտորոշումը, հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակի առկայությունը, ընտանիքում առկա երեխաների թիվն ու տարիքը, բռնությունը հայտնաբերող (ուղղորդող) կազմակերպությունը/ ֆիզիկական անձը և ապաստարան ուղղորդելու դեպքերը:

Ստամբուլյան կոնվենցիայի 10-րդ հոդվածն էլ սահմանում է տվյալների հավաքագրման գործընթացի համակարգման համար պատասխանատու մարմինն՝ նշելով. «Մասնակից պետությունները պետք է մեկ կամ մե-

կից ավելի մարմինների լիազորեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի կանխարգելման և դրանց դեմ պայքարի համար մշակված քաղաքականությունների և միջոցների համակարգումը, իրականացումը, դիտարկումն ու գնահատումը կատարելու համար: Այս մարմինների կողմից համակարգվում է 11-րդ հոդվածում նշված տվյալների հավաքումը, ուսումնասիրությունը և տարածումը»:<sup>3</sup>

Ստամբուլյան կոնվենցիան որևէ կերպ չի սահմանափակում ընտանեկան բռնության դեպքերի մասին տեղեկատվություն տրամադրելու համար պատասխանատու դերակատարների շրջանակը: Այս առումով, կոնվենցիայի բացատրական գեկույցում միայն ընդհանուր պատկերացում է տրվում դերակատարների հնարավոր շրջանակի մասին՝ նշելով, որ վիճակագրական տեղեկատվությունը կարող է ներառել օրենքի կիրարկումն ապահովող մարմիններից, առողջապահություն իրականացնող և սոցիալական աջակցության ծառայություններից, ԶԿ-ներից և դատական իշխանության մարմիններից (public prosecutors) հավաքագրված վարչական տվյալներ:<sup>4</sup>

Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման մոդելի համաձայն՝ կենտրոնացված հաշվառումն իրականացվելու է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ դատախազության, ՀՀ դատական դեպարտամենտի, ինչպես նաև օրենքով սահմանված աջակցության կենտրոնների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրված, սահմանված ձևաթղթերում լրացված տվյալների հիման վրա (Կետ 4):<sup>5</sup>

**Միջազգային փորձ: Ստանդարտներ vs իրականություն**

ԵՄ և ԵՆ անդամ երկրների պրակտիկաների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանիքում բռնության դեպքերի հաշվառման առավել կանոնակարգված և գործուն մեխանիզմներ ունեն օրենքի կիրարկումն ապահովող մարմինները, մասնավորապես՝ **ոստիկանությունը**:<sup>6</sup> Դեպքերի մեծամասնությունում հավաքագրված տեղեկատվության մեջ հնարավոր է տարանջատել կանանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերը: Այնուամենայնիվ, ԵՄ անդամ երկր-

<sup>2</sup> Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի բացատրական գեկույց, ԵՆ պայմանագիր No. 210, Ստամբուլ, 11.05.2011; էջ 76  
<sup>3</sup> Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, Հոդված 10, Կետ 1  
<sup>4</sup> Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի

մասին» կոնվենցիայի բացատրական գեկույց, ԵՆ պայմանագիր No. 210, Ստամբուլ, 11.05.2011; էջ 76  
<sup>5</sup> «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 1381-Ն, 10.10.2019  
<sup>6</sup> Եվրոպայի խորհրդի՝ բռնությունից կանանց պաշտպանության մասին Rec (2002)5 հանձնարարականի իրականացման նկատմամբ 4-րդ շրջանի մոնիթորինգի արդյունքների վերլուծություն, 2014թ.

Ների մեծ մասում դա ենթադրում է տեղեկատվություն բռնության ֆիզիկական և սեռական դրսևորումների մասին, մինչդեռ ընտանեկան բռնության հոգեբանական և տևտեսական ձևերը չեն գրանցվում: Միայն 13 երկրներ են տրամադրում առանձին տեղեկատվություն հոգեբանական բռնության վերաբերյալ, և միայն երկուսում է հնարավոր տարանջատել տևտեսական բռնության մասին տեղեկատվությունը:<sup>7</sup>

**Դատարանների և դատախազության կողմից** ընտանեկան բռնության մասին համապարփակ տեղեկատվության հավաքագրման դեպքերը ավելի քիչ են քան ոստիկանության պարագայում: Դրա հիմնական պատճառն այն է, որ հանցագործությունները դասակարգվում են ըստ քրեական օրենսդրության, և *ընտանեկան բռնության դեպքերն ու դրա առանձին տեսակները չեն առանձնացվում*, եթե դրանք *սահմանված չեն որպես հանցագործություն*: Բացի այդ, դատական մարմինները որոշ դեպքերում գրանցում են *տեղեկատվություն մեղադրյալի և կայացած վճռի մասին*<sup>8</sup> չներառելով տեղեկություն հանցագործության զոհերի, բռնարարի և զոհերի հարաբերությունների մասին: Նման պարագայում հնարավոր չէ առկա տվյալների համադրմամբ վերհանել ընտանեկան բռնության դեպքերը:<sup>8</sup>

**Բժշկական հաստատությունների** կողմից ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման խնդիրները բազմաբնույթ են: Թերևս, այդ պատճառով ԵՄ անդամ երկրներից միայն 9-ն են առողջապահական ծառայություններ մատուցող հաստատություններից ազգային մակարդակում հավաքագրում տեղեկատվություն ընտանեկան բռնության դեպքերի մասին: Ավելին, դրանց մի մասը վերաբերում է բացառապես *սեռական բռնության* դեպքերին:<sup>9</sup>

Առկա խնդիրների մասին խոսելիս կարելի է առանձնացնել բուժանձնակազմի՝ իր պարտականությունների շրջանակի մասին ունեցած պատկերացումները, ընտանեկան բռնության զոհին նույնականացնելու բուժաշխատողների ոչ բավարար կարողությունները, մասնագիտական էթիկայի կանոններն ու փոխադարձ վստահության մթնոլորտը պահպանելու անհրաժեշտությունը:<sup>10</sup>

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից մշակվել և հաստատվել է Զիվանդությունների միջազգային դասակարգումը, որը կարող է օգ-

տագործվել նաև գործնական կոնկրետ նպատակների, մասնավորապես գենդերային հիմքով բռնության (օր.՝ սեռական, ֆիզիկական և հոգեբանական բռնություն) դրսևորումների հայտնաբերման համար:<sup>11</sup> Տեսականորեն, Զիվանդությունների միջազգային դասակարգման վերջին վերանայումը (ՅՄԴ-10) հնարավորություն է տալիս տեղեկատվություն հավաքագրել այն կանանց մասին, ովքեր բուժհաստատություն են դիմել ընտանեկան բռնության հետևանքով պատճառված վնասվածքների պատճառով: Պրակտիկայում, սակայն, այս գործիքը կիրառումը մասնագիտական բարձր պատրաստվածություն է ենթադրում, քանի որ ընտրության համար առաջարկում է հիվանդությունների առավել քան 10.000 ծածկագրեր:<sup>12</sup>

Ինչ վերաբերում է **սոցիալական ծառայություններին**, վերջիններս աչքի են ընկնում ընտանեկան բռնության առավել լայն ընկալման հիման վրա ծավալվող գործունեությամբ: Ընդ որում, ընտանեկան բռնության սահմանումը կարող է փոփոխության ենթարկվել՝ ըստ կոնկրետ ծառայության *գործունեության նպատակի և թիրախի խմբի*: Այս առումով, *ներդաշնակեցված համեմատելի տվյալների հավաքագրումը սոցիալական աջակցության տարաբնույթ ծառայություններից կարող է խնդրահարույց լինել*: Կարևոր է նշել, որ Ես անդամ երկրներում ընտանեկան բռնության խնդիրը հասցեագրող սոցիալական ծառայություններից առավել արդյունավետ և կանոնակարգված կերպով տեղեկատվություն են հավաքագրում *կանանց ապաստարաններն ու թեժ գծերը*:<sup>13</sup>

**Այսպիսով, ինչպե՞ս հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը**

*«Ինչպե՞ս» հարցի պատասխանը անհրաժեշտ է հնարավորինս լայն դիտարկել՝ կենտրոնանալով ոչ միայն տեղեկատվության հավաքագրման կոնկրետ մեխանիզմների և եղանակների ընտրության, այլև առկա գործիքները կիրառության մեջ դնող համակարգի կայացման խնդիրներին վրա:*

Ներկայումս, կարգով հաստատված է տեղեկատվությունը *թղթային տարբերակով, փակ ծրարով* լիազոր մարմին տրամադրելու տարբերակը, ընդ որում յուրաքանչյուր մարմին պարտավորվում է առանձին հարցա-

<sup>7</sup> Եվրոպական պառլամենտի քաղաքացիական իրավունքների և սահմանադրական հարցերի քաղաքականության բաժին, «Կանանց հանդեպ բռնությունը և ԵՄ միացումը Ստամբուլյան կոնվենցիային», 2017թ., էջ 34  
<sup>8</sup> Զանցագործությունների կանխարգելման և վերահսկման եվրոպական ինստիտուտ, «Ընտանեկան բռնության մասին վարչական տվյալների հավաքագրում Ես անդամ երկրներում», Ստրասբուրգ, 2008թ., էջ 11; Եվրոպական պառլամենտի քաղաքացիական իրավունքների և սահմանադրական հարցերի քաղաքականության բաժին, «Կանանց հանդեպ բռնությունը և ԵՄ միացումը Ստամբուլյան կոնվենցիային», 2017թ., էջ 34  
<sup>9</sup> Եվրոպական պառլամենտի քաղաքացիական իրավունքների և սահմանադրական հարցերի քաղաքականության բաժին,

«Կանանց հանդեպ բռնությունը և ԵՄ միացումը Ստամբուլյան կոնվենցիային», 2017թ., էջ 34  
<sup>10</sup> Զանցագործությունների կանխարգելման և վերահսկման եվրոպական ինստիտուտ, «Ընտանեկան բռնության մասին վարչական տվյալների հավաքագրում Ես անդամ երկրներում», Ստրասբուրգ, 2008թ., էջ 13  
<sup>11</sup> ԵԽԽԿ, Զավասարության և խտրականության դեմ պայքարի հարցերով հանձնաժողով, «Կանանց հանդեպ բռնության մասին տվյալների համակարգային հավաքագրում», 2014, էջ 7  
<sup>12</sup> Զանցագործությունների կանխարգելման և վերահսկման եվրոպական ինստիտուտ, «Ընտանեկան բռնության մասին վարչական տվյալների հավաքագրում Ես անդամ երկրներում», Ստրասբուրգ, 2008թ., էջ 13  
<sup>13</sup> Նույն տեղը

թերթ լրացնել ընտանեկան բռնության դեպքի հետ աշխատելու պարագայում: Մինչդեռ, վարչարարության արդյունավետ մեխանիզմների ընտրությունն ու կիրառումը մեծապես կարևոր է *տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացը* ոլորտին դարձնելու և վարչական գործառնություններ իրականացնող մարմինների վրա լրացուցիչ «ծանր» բեռ չդնելու առումով:

Այս ուղղությամբ միջազգային փորձը տարբեր լուծումներ է առաջարկում: Որոշ դեպքերում արդարադատության ոլորտի մարմինները, օրինակ, *առանձին փաստաթղթաշրջանառություն* *չեն իրականացնում* ընտանեկան բռնության դեպքը քննելիս, այլ «*ընտանեկան բռնություն*» գրույթով *պիտակում են* (անգլ.՝ flagging) համապատասխան թղթապանակը:<sup>14</sup> Խիստ օգտակար կարող է լինել նաև տվյալների հավաքագրման և վերլուծության *էլեկտրոնային տարբերակի* կիրառումը, ինչը համապատասխան կողմերի միջև առկայության դեպքում հնարավորություն կտա խուսափել ընտանեկան բռնության դեպքի կրկնողությունից և բարձրացնել ընտանեկան բռնության արձագանքման օպերատիվությունը:

Տվյալների հավաքագրման գործընթացում անհրաժեշտ է հանգամանորեն մշակել և ներդնել նաև *անձնական տվյալների գաղտնիություն*ն ապահովող գործունե մեխանիզմներ: Ստամբուլյան կոնվենցիայով սահմանում է պետության պարտավորությունը աջակցելու «*ընտանեկան բռնության պատճառների և հետևանքների, դրսևորումների և դատապարտումների տոկոսային հարաբերակցության, ինչպես նաև միջամտության առկա փորձերի արդյունավետության վերաբերյալ հետազոտությունների իրականացմանը*» և հավաքագրված տեղեկատվությունը հասանելի դարձնելու հանրությանը:<sup>15</sup> Ուստի, պետք է հստակ լինեն լիազոր մարմնի կողմից հավաքագրված տեղեկատվությունը ազդեցացնելու և նույնացուցիչներ չպարունակող, ազդեցացված տեղեկատվությունը հետազոտական համայնքին ու հանրությանը հասանելի դարձնելու գործիքներն ու մեխանիզմները:

**Համակարգի կայացման և անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրելու ունակության վրա ազդում են մի շարք հիմնական գործոններ՝ տեղեկատվության հավաքագրման համար պատասխանատու մարմինների ընտրությունը, վերջիններիս գործունեության շրջանակն ու ինստիտուցիոնալ կարողությունը:**

**Ների մակարդակը:** *Անդրադառնալիս այս գործոններին առանձին-առանձին:*

**Դերակատարների ներգրավվածություն**

Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման մոդելը ենթադրում է տեղեկատվության հավաքագրում ընտանեկան բռնության դեմ պայքարի բոլոր հիմնական ոլորտները ներկայացնող կառույցների կողմից, սակայն *սոցիալական ոլորտի* դերակատարներից տեղեկատվության հավաքագրման պատասխանատվություն դնում է միայն *աջակցության կենտրոնների և խնամակալության ու հոգաբարձության մարմինների* վրա: Մինչդեռ միջազգային պրակտիկայում առկա են *երեխաների և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հանրային կառավարման մարմիններից, զբաղվածության և սոցիալական ապահովության* ոլորտի ծրագրեր իրականացնող *գերատեսչություններից* և համապատասխան ծառայություններ մատուցող *ՀԿ-երից* տվյալների հավաքագրման դեպքեր: Բացի այդ, ինչպես նշվեց, միջազգային պրակտիկայում սոցիալական ծառայություններից առավել արդյունավետ և կանոնակարգված կերպով տեղեկատվություն են հավաքագրում *կանանց ապաստարաններն* ու *թեժ գծերը*, որոնք այս պարագայում ևս ամբողջությամբ կամ մասամբ ներգրավված չեն:<sup>16</sup> Հետևաբար, միջազգային փորձը և Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է հասկանալ ընտանեկան բռնության խնդրին առնչվող սոցիալական ոլորտի դերակատարների առավել արդյունավետ ու ներկայացուցչական ընդգրկման խնդիրը:

Հարկ է նշել նաև այն մասին, որ ընտանեկան բռնության մասին տվյալների հավաքագրման պրակտիկաներն ու լավագույն փորձը ուսումնասիրող հետազոտությունները գրեթե չեն անդրադառնում *կրթության ոլորտի ինստիտուտների* կողմից տեղեկատվության տրամադրման դեպքերին: Ավելին, թեև Ստամբուլյան կոնվենցիան որևէ կերպ չի սահմանափակում ընտանեկան բռնության դեպքերի մասին տեղեկատվություն տրամադրելու համար պատասխանատու դերակատարների շրջանակը, առկա առաջարկությունները հիմնականում վերաբերում են օրենքի կիրարկումն ապահովող մարմինների, բուժհաստատությունների, սոցիալական ծառայությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից տվյալների հավաքագրման պրակտիկաների բարելավմանը:<sup>17</sup>

<sup>14</sup> Նման փորձառություն ունեն, օրինակ, Անգլիան և Ուելսը, որտեղ ոստիկանությունը կիրառում է հանցագործությունների «պիտակավորման» համակարգ: Այս պիտակների շարքում են ընտանեկան բռնությունը, երեխաների հանդեպ սեռական բռնությունը, երեխաների սեռական շահագործումը, ատելության հիմքի վրա կատարված հանցագործությունը, ակտիվ չարաշահման հետևանքով կատարված հանցագործությունը և այլն:

<sup>15</sup> Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիա, Հոդված 11

<sup>16</sup> Աջակցության կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունները ենթադրում են նաև «թեժ գծի» ծառայություն, ուստի համապատասխան տեղեկատվությունը կարող է արտացոլվել կառույցի կողմից լրացված հարցաթերթերի մեջ

<sup>17</sup> Եվրոպայի խորհուրդ, «Ապահովելով կանանց հանդեպ բռնության և ընտանեկան բռնության մասին տվյալների հավաքագրումն ու հետազոտությունները իրականացումը: Ստամբուլյան կոնվենցիայի 11-րդ հոդված», հոդվածների ծողվածու, 2016թ

Եվ քանի որ Հայաստանում ենթադրվում է տեղեկատվության հավաքագրում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, առաջին հերթին անհրաժեշտ է հասկանալ. ա) կրթության ոլորտում ո՞վքեր և ի՞նչ գործիքներով են հայտնաբերելու ընտանեկան բռնության դեպքերը և կատարելու համապատասխան հաշվառումը, բ) ինչպիսի՞ գիտելիքի, կարողությունների և ռեսուրսների կարիք ունեն վերջիններս:

**Գործունեության տարբեր շրջանակներ և ընտանեկան բռնության տարբեր ընկալումներ**

Միջազգային փորձը ցույց է տալիս, որը ընտանեկան բռնությունը հասցեագրող կառույցները միմյանցից էականորեն տարբերվող գործունեություն են իրականացնում և դրանից կախված՝ փոխվում են նաև ընտանեկան բռնության մասին ընկալումներն ու երևույթի սահմանումը: Մի դեպքում ընտանեկան բռնությունը սահմանվում է ըստ քրեական օրենսդրության պահանջների (արդարադատություն իրականացնող մարմիններ), մեկ այլ դեպքում առողջությանը հասցված վնասի տեսանկյունից (բժշկական հաստատություններ), իսկ երրորդ դեպքում ընտանեկան բռնությունը դիտարկվում է առավել լայն, սակայն կրկին կարող է տարբեր սահմանումներ ստանալ՝ կախված ծառայության նպատակից և թիրախի մեջից (սոցիալական ծառայություններ):

Այս առումով, թեև ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են ընտանեկան բռնությունն ու դրա տեսակները, կարևոր է միջոցառումներ ձեռնարկել *սահմանումների միասնական կիրառումը*, պատասխանատու մարմինների կողմից ընտանեկան բռնության բոլոր, մասնավորապես «ոչ այնքան ակնհայտ» ձևերի՝ հոգեբանական, տնտեսական բռնության և անտեսման դեպքերի հայտնաբերումն ու համապատասխան կերպով զեկուցումն ապահովելու ուղղությամբ:

Սահմանումների միասնական կիրառման տեսանկյունից օգտակար կարող է լինել նաև ձևաթղթերի լրացման համար կոնկրետ հրահանգների մշակումն ու պատասխանատու մարմիններին տրամադրումը: Այս առումով, ԵՄ անդամ երկրների վարչական տվյալների հավաքագրման պրակտիկաներն ուսումնասիրող հետազոտությունը նշում է, որ պրակտիկայում գոհի ու բռնարարի հարաբերությունների բնութագրման տարբեր դասակարգումներ են կիրառվում. մի դեպքում առանձնացվում են նախկին և ներկա ինտիմ հարաբերությունները, մեկ այլ դեպքում դիտարկվում է միայն հարաբերությունների ներկա կարգավիճակը, մի դեպքում որպես միասնական կատեգորիա դիտարկվում է «ծնողը», մեկ այլ դեպքում առանձին նշվում են «հայր», «մայր», «խորթ հայր/մայր», «խնամակալ հայր/մայր», «խնամատար հայր/մայր» կատեգորիաները:<sup>18</sup> Զանի որ դասակարգումների նման

տարբերությունները հնարավոր չեն դարձնում համեմատելի տվյալների ստացումը, կոնկրետ հրահանգների մշակումն ու համապատասխան վերապատրաստումների իրականացումը մեծապես կարող են նպաստել օրենսդրությամբ սահմանված հասկացությունները արտացոլող, համաձայնեցված և համեմատելի տվյալների հավաքագրման գործընթացին:

**Ինստիտուցիոնալ կարողություններ**

Ընտանեկան բռնության դեպքերի հայտնաբերման, հասցեագրման և հաղորդման արդյունավետությունը անհրաժեշտ է դիտարկել նաև պատասխանատու մարմինների՝ *ընտանեկան բռնության դեպքը հայտնաբերելու ունակություն և որոշ դեպքերում այդ մասին զեկուցում տալու պատրաստակամության կոնտեքստում:*

ՄՁՄԿ-ի կողմից 2017թ. իրականացված հետազոտությունը անդրադառնում է սոցիալական աջակցության, արդարադատության, կրթության, և առողջապահության ոլորտի կառույցների ինստիտուցիոնալ կարողությունների խնդիրներին՝ ընդգծելով, մասնավորապես, տարբեր ոլորտների աշխատակիցների մասնագիտական ոչ բավարար կարողությունները, մարդկային, տեխնիկական և նյութական ռեսուրսների ոչ բավարար մակարդակը, ծառայությունների մատուցման ստանդարտատիպացված չափորոշիչների, ընտանեկան բռնության գոհի նույնականացման և ուղղորդման գործուն մեխանիզմների բացակայությունը:<sup>19</sup>

Թերևս, այս հանգամանքն է հանդիսանալու ընտանեկան բռնության մասին համապարփակ և որակյալ վարչական ռեգիստր ձևավորելու հիմնական խոչընդոտը: Ուստի պարտականությունների դեկլարացումը պետք է անկայման զուգորդվի անհրաժեշտ գործիքների, ռեսուրսների և գիտելիքի փոխանցմամբ, այլ պարագայում անարդյունք կլինեն տեղեկատվության հավաքագրման համակարգի կայացման ուղղությամբ ներդրվող բազմաքանակ ջանքերը:

**Հետևաբար, կարևորագույնը...**

Ընտանեկան բռնության վարչական ռեգիստր ձևավորելու հեռանկարների և տարբերակների մասին խոսելիս տեղեկատվության հավաքագրման գործընթացի վերջնական նպատակը չմոռանալն ու համակարգը կառուցելն է՝ այդ նպատակին առավելագույն արդյունավետությամբ հասնելու տրամաբանությամբ:

Տեղեկատվությունը ինքնանպատակ արդյունք չէ. այն **կարևոր ու անհրաժեշտ գործիք է ընտանեկան բռնության դեմ պայքարի, մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու ճանապարհին:**

<sup>18</sup> Հանցագործությունների կանխարգելման և վերահսկման եվրոպական ինստիտուտ, «Ընտանեկան բռնության մասին վարչական տվյալների հավաքագրում ԵՄ անդամ երկրներում», Ստրասբուրգ, 2008թ., էջ 10

<sup>19</sup> Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացման ուղղված որակական հետազոտություն, 2017. Էջ 68-72



Մարդկային  
գարգացման  
միջազգային  
կենտրոն

# viewpoint Տեսակետ

---

Սայաթ Նովա 19, Երևան 0001

Հեռ.՝ 374 (10) 582638

Էլ.փոստ՝ [think-tank@ICHD.org](mailto:think-tank@ICHD.org)

[www.ICHD.org](http://www.ICHD.org)

---